

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-9-5-Ա

ք. Երևան

04.11.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի նոյեմբերի 4-ի նիստում քննարկեց 2021 թվականի հուլիսի 7-ին ներկայացուցիչ Լիանա Մանուսաջյանի կողմից ներկայացված՝ «Հելլո սայթ» ՍՊԸ ընկերության (Երևան, Երվանդ Քոչար 70, AM) «ՀԵԼԼՈ ՍԱՅԹ ХЕЛЛО САЙТ HELLO SITE» (No20201446) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը շփոթելու աստիճան նման է 9-րդ դասի ապրանքների, 35-րդ, 38-րդ, 42-րդ դասերի ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող «HelloSIM ՀելլոՍԻՄ ХеллоСИМ» («Սիրթել» ՍՊԸ, ք. Երևան Գյուլբենկյան 1, բն. 2, AM N 27193 30.03.2018) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 1-ին ենթակետի, 122-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները: Տվյալ դեպքում համեմատվող բառային ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններում ներառված բառային տարրերի նման հնչողությամբ և նշանների համընկնող մասերի բնույթով, այն է՝ նիշերի բառային տարրերի սկզբնամասը հանդիսացող «ՀԵԼԼՈ», «ХЕЛЛО» և «HELLO» բառով:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները առաջարկեց մերժել ապրանքային նշանի գրանցումը, քանի որ հայտարկված «ՀԵԼԼՈ ՍԱՅԹ ХЕЛЛО САЙТ HELLO SITE» ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է 9-րդ դասի ապրանքների, 35-րդ, 38-րդ և 42-րդ դասերի ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող «HelloSIM ՀելլոՍԻՄ ХеллоСИМ» ապրանքային նշանին:

Փորձաքննության բաժնի պետը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել ներկայացուցիչ Լիանա Մանուսաջյանի կողմից ներկայացված՝ «ՀԵԼԼՈ ՍԱՅԹ ХЕЛЛО САЙТ HELLO SITE» (No20201446) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ